

Քրիստոսի նման՝ չի դիմադրում իրեն տանջողներին, մահն ընդունում է անմոռունք։ Մինչդեռ Վարդանանք զինված գնացին մարտադաշտ, եւ իրենք մեծ կոտորած կազմակերպեցին։ Վարդանանք պսակազերծողները փաստում են, թե այդ դեպքում մարտիրոսների բանակում պետք է արձանագրվեն նաեւ խաչակրաց արշավանքներում զոհված բոլոր զորահրամանատարներն ու զինվորները։ Պարզվում է, որ ժամանակին Փոկաս եւ Նիկեփորոս կայսրերը նման խնդրանքով դիմել են հույն եկեղեցու առաջնորդներին, սակայն վերջիններս մերժել են զոհված խաչակիրներին հայտարարել եկեղեցու սրբեր։

Գաբրիել Ավետիքյանը հիշեցնում է, որ խաչակիրներին երբեք չի կարելի համեմատել Վարդանանք հետ. տարբեր էին նրանց նպատակները, եւ բոլորովին չբաղդատվող՝ նրանց վարքագիծը։ Պատմությունից հայտնի են խաչակիրների պախարակելի շատ գործեր՝ զավառների նվաճում, երբեմն խառնակ վարքագիծ, անկարգություններ ու անիրավություններ՝ գրաված տարածքներում։ Ավետիքյանը Վարդանանք մարտիրոս լինելու դատը պաշտպանում է՝ եկեղեցու երեսելի հայրերի մշակած չափանիշները հիմք ընդունելով։ Նա վկայակոչում է Թովմա Աբվինացուն, որի կարծիքով, եթե նահատակը սրով պաշտպանում է հասարակությունը թնամուց, որի նպատակն է Քրիստոսի հավատի կործանումը, եւ այդ պաշտպանը զոհվում է, ապա նա մարտիրոս է։ Բացի այդ, չէ որ Վարդանը եւ նրա զինակիցները կարող էին պահպանել իրենց կյանքը, ուրանալ հավատը, տեղափոխվել ուրիշ երկիր, սակայն նրանք հանուն հավատի ընդունեցին մահը։

Ներսես Շնորհալիւն իր շարականի վերջին՝ 10-րդ տան մեջ, չի մոռանում նշել, որ Վարդանանք նահատակության գնով.

*Եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան,
Ունելով միշտ բարեխօս ըզճրգնութիւն մարտի սոցա։*

Բելգիացի նշանավոր հայագետ Ֆելիքս Նելը իր «Քրիստոնյա Հայաստանը եւ նրա գրականությունը» սովորածավալ աշխատության մեջ հատուկ գլուխ է նվիրել Ներսես Շնորհալուն։ Նրան հայտնի են Վարդանանք մարտիրոսության հետ կապված կարծիքների ամբողջությունը։ Նա գնահատում է հայ մատենագիրների կարծիքները եւ Վարդանանք կատարած դերի հարցերում հետեւորդն է Եղիշեի եւ Ներսես Շնորհալու։ Ֆ. Նելը հիացմունքով է խոսում ներսես Շնորհալի գործչի եւ գրողի մասին՝ վերջինիս որակելով որպես մեծ գրող եւ նշանավոր կաթողիկոս եւ Վարդանանք ու Ղեւոնդյաններին անվանում է հայ եկեղեցու փառքեր՝:

ДОЛУХАНИЯ А. Г. —“Шаракан Варданани” Нерсеса Шнорали - В статье истолковываются некоторые спорные вопросы, связанные с проблемой мартирологии героев Аварайрского сражения. Этот шаракан- известный стих Нерсеса Шнорали, который входит в число ритуальных произведений армянской церкви. Очень важно патриотическое и художественное значение этого произведения, которое своим духовным богатством обогащает внутренний мир верующего человека.

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ «ՆԱՎՁԻԿԵ» ՔԵՐԹՎԱԾԸ

Հ. Ն. ԱՂԱՍՅԱՆ

«Նավզիկեն», Եղիշե Չարենցի բնութագրությամբ իր «ամենաչքնաղ» երկն է։ «Նավզիկեի» մասին քիչ է գրվել։ Գրքային հրատարակությամբ առաջին անգամ, լույս է տեսել բանաստեղծի դստեր՝ Անահիտ Չարենցի կազմած ու 1983 թվականին հրատարակած «Ե. Չարենց, Անտիպ եւ չիավաքված երկեր» ժողովածուում, երկրորդ անգամ՝ 1986-1987 թվականներին հրատարակված Չարենցի քառահատորի երրորդ հատորում (1987թ.)։

Գրականագիտության մեջ «Նավզիկեի» մասին առաջին լուրջ խոսքն ասել է Հ. Էդոյանը «Եղիշե Չարենցի պոետիկան» գրքում՝ հենց պոետիկական հատկանիշների բացահայտման դիտանկյունով։ Այդ երկի ուշացած տպագրության եւ նրա մասին լռության պատճառները, անտարակույս, կապված են եղել «փակ դռների» գաղտնիքներին առնչվող հարցերի հետ։

«Անտիպ ու չիավաքված երկերի» ծանոթագրություններից հայտնի է դառնում, որ Չարենցն այդ երկը նախածեղծել է դեռ 1935-ին, իսկ հեղինակային տարբերակներից մեկի վերնագրի տակ կա «Լ»-ին (հավանաբար՝ Լեյլիին) գերհամառոտ ընծայականը։ «Նավզիկեի» ժանրի մասին Չարենցը որեւէ տեղ ոչինչ չի ասել։ Անահիտ Չարենցն այն դրել է պոեմների շարքը՝ դրա հիմքերն ունենալով, բայց ավելի շատ հիմքեր կան այն եղերերգություն համարելու։

Բավական խառն են այդ երկի տարբերակների, պատառիկների խնդիրները (նույնիսկ հրատարակված տարբերակից անհայտ ծեռքեր «հայտնի» տարիներին էջեր են պոկել)։ Հրատարակված բնագիրն ունի հետեւյալ ընծայականն ու թվագրությունը՝ «Արփիկին, Իզաբելային իմ ամենաչքնաղ երկը.- Ե. Չար. 1936. 21.9»։ Ապա՝ «1 Հին Նավզիկե»։

Երկն ունի չորս մաս։ Երկրորդ մասը եւս ունի ընծայական՝ «Կնոջս Արփենիկ Չարենցի հիշատակին»։ «Նավզիկեն» սյուժե չունի. էլեգիական խորունկ թախծով գրված քնարախոհական մենախոսություն է։ Նրա՝ «1936. 21.9» թվագրությունն արդեն խորհրդանշում է խորհրդային մտավորականությանը դեպի կառավարան տանելու իրողությունը։ Աքսորներն սկսվել էին 1936-ի մայիսի 16-ից։ Առջեւում սահմուկեցուցիչ 1937-ն էր։ Արդեն բանտում էին Ա. Բակունցը, Ն. Ստեփանյանը, Գ. Մահարին, Մ. Արմենը, Վ. Թոթովենցը եւ ուրիշներ։

Չարենցի կյանքի լուրջ դրաման սկսվել էր «Գիրք ծանապարհիի» լույս տեսնելուց ի վեր։ Մինչեւ 1936-ի սեպտեմբերի 21-ը Չարենցը եւս քանիցս ենթարկվել էր դաժան հավատաքննության. երկու անգամ արդեն ստորագրել էին տվել քաղաքից չբացակայելու մասին ծանուցագիրը։ «Նավզիկեն» նա ավարտել է տնային կալանքի մեջ ստույգ մահապարտի զգացողությամբ։ Մեկուսացված գրողը «հայկական հելիկոնի» վայրէջքի առթիվ «վերելի» ու «ներքելի» հակառակորդներին ծաղկող բազմաթիվ տարածանք ստեղծագործություններ էր գրել եւ, առհասարակ, գրելուց թացի ուրիշ սփոփանք չունեւ։ Գրչով հերկում էր պատմության ու մշակույթի հեռաստանները, դիմակայության հոգեւոր նեցուկներ որոնում։

Պահի եւ ընդհանրապես 30-ական թվականներին Չարենցի ապրած ողբերգության բնութագիրը ներկայացրել է գրականագետ Հր. Թամրազյանը. «Բոլոր տեսակի մեղադրանքներից ու զրպարտություններից ծանրագույնը հավատաքննությունն է, երբ մարդուն բռնի ուժով դուրս են բերում իր նվիրական գաղափարների, վաստակի ու երազների դեմ... Այս մթնոլորտում Չարենցն օգնության է կանչում իր հարազատներին՝ Խորենացուն, Աբովյանին, Կոմիտասին, Թումանյանին, Հայնեին, որոնցով բախտի նմանություն նրանց հետ»։

Ավելացնենք, որ ընդհանուր մշակութային երեսելիներից բացի՝ արդեն ուղիղ մահվան աչքերի մեջ նայող Չարենցի կյանքում ընդգծված երեսում էր նաեւ կին մտավորականի եւ, առհասարակ, կին նեցուկի բացակայությունը։ Կյանքում եւ արվեստում Չարենցը չէր հանդուրժում պաղարյուն էսթետներին. նա ապրել էր բուռն, մինչեւ իսկ՝ աղմկոտ կյանքով. կինն ու գինին, երգն ու վայելքը նրա ստեղծագործությանը ներշնչանք, գույն ու երանգ տվող հիմնական խթաններից էին եղել։ Իսկ այժմ, երբ դատապարտված էր մեկուսացման, եւ քչերն էին սիրտ անում հանդիպելու նրան՝ տանը կամ դրսում, Չարենցն առանձնակի զգում էր նաեւ երբեմնի ունեցած ու կորցրած, սրտակից ու կարեկից, ապավեն կին նեցուկի կարիքը։

Եվ պոետի մահատեսիլ խոհերի խորքից հառնում է լուսավոր հին կերպարը, որը բաղդատելի է հունական միֆական հերոսուհուն։ Իսկ միֆին դիմելն անսույժե եղերերգության համար հետեւյալ ներքին սյուժեն է ստեղծել։ Հոկտեմբերյան հեղափոխությունը, որի հայ մեծ երգիչն էր Չարենցը, դուրս եկավ, որ նրա համար մի Տրոյական պատերազմ էր։ Ինչպես դեպքերի վրա որոշակի ազդեցություն ունեցող Ողիսեսը մերկանդամ, ցրտահար ու սովահար, անխուսափելի մահվանը դեմահանդիման, -այդպես էլ Չարենցը, պանծացնելով հեղափոխությունն ու նրա առաջնորդին, ի վերջո դարձավ նրա հետնորդներից հալածված մահապարտ։

Ողիսական տառապանքների համար Ողիսեսին վարձատրելու փոխարեն այդ պատերազմը հրահրող

աստվածները նրան դեռ հետապնդում էին, փորձությունների ենթարկում, իսկ վարձատրողը եղավ անձեղ մի գեղեցկուհի՝ Մայադների երկրի մեծահոգի արքա Ալքիմոսի դուստր Նավսիկեան, որն օտար երկիր ընկած մերկ Ողիսեսին (Աթենաս Պալադի գուշակությամբ) իր փեսացուն կարծելով տուն տարավ, ապա իսկական իրողությունն իմանալուց հետո էլ բարեխոսեց նրա համար իր հոր մոտ՝ նրան արժանավայել ընդունելու եւ նավով ու նոր շքախմբով հայրենիք ծանապարհելու։ Նավսիկեան (Չարենցը դարձրել է Նավգիկե) սիրեց Ողիսեսին, բայց գիտակցեց նրան փեսայացնելու անհնարինությունը, հատուցման արժանի համարեց նրա մեծ առաքելությունը։

Նավգիկեի չվարձատրված, չգնահատված մարդկայնությունը գնահատում են դարերը։ Այդ պահը որսացել է եւ Չարենցը։ Ողիսեսի նման բազմարկած Չարենցն էլ հանդիպեց Արփենիկ Տեր-Աստվածատրյանին, որը կիսեց նրա աղմկոտ կյանքի դրաման։ Նրա համար եղավ հմայքով չկրկնված սեր, աստվածային կին, հավատարիմ ընկեր, բայց ավա~ղ, կյանքից հեռացավ ծաղկուն հասակում՝ Չարենցին բողոքելով ոչ թե չգնահատված մարդկության, այլ՝ իր անփոխարինելիության անամոք ցավը։ Արփենիկի մահվան հետ Չարենցը մինչեւ վերջին շունչն էլ չհաշտվեց։ Նրանից հետո բանաստեղծը շատերին հանդիպեց, ամուսնացավ գեղեցկուհի Իզաբելայի հետ, զավակներ ունեցավ, բայց Արփենիկի բացակայությունը ոչնչով ու ոչ ոքով չլցվեց։ Չարենցը դա խոստովանել է նաեւ «Նավգիկեում».

*Ոչ գգվանքներս՝ քեզ չռայլորեն ցրած
Գիշերներիս կարմիր երազի մեջ,-
Ոչ կարոտներս անհուն՝ իմ երգերում գրած,-
Չսպառնեցին կարոտն իմ, Նավգիկե:-*

Արփենիկի նման կնոջ բացակայությունը, բնականաբար, ամենից ավելի Չարենցը պետք է զգար մա-
հապարտության օրերին։ Նավգիկեի առասպել էր, Արփենիկը՝ առասպելացվելու արժանի իրական կին։ Բայց իր հազվագյուտ հատկանիշների ողջ ռեալականությամբ հանդերձ՝ ընտանիքի կին Արփենիկը թերեւս չէր կարող դառնալ եղբերգության թմբկահարվող էպիկենտորոն։ Այլ դեպքերում, իհարկե, Չարենցն ամբողջովին Արփենիկին նվիրված երգեր գրել է, ինչպես օրինակ՝ դեռ 1923-ին՝ «Երկու սոսնետ Արփիկի հիշատակին» («Իմ բարեկամ, իմ սեր, հերոսական ընկեր») եւ «Մենք ապրեցինք քեզ հետ մի վիթխարի դարում» սկսվածքներով) կամ ավելի ուշ, 1937-ին՝ «Բալլադ սիրո» Արփենիկի հիշատակին» ընծայականով սքանչելի բանաստեղծությունը։ Բայց «Նավգիկեում» Չարենցը կերտում էր սիրո եւ կնոջ գեղարվեստական համայնապարփակ հուշարձան, ուր իր բացառիկ տեղն ունեցող Արփենիկը միակը լինել չէր կարող։

«Նավգիկե» Արփենիկ Չարենցի նախակերպարով կերտված ընդհանրացում է։ Արփենիկ-Նավգիկեի կյանքի ընդհատված իրականությունը Չարենցը ներքին ենթատեքստով միաձուլում է առասպելին՝ նրան էլ դարձնելով «ապոլլոնյան աշխարհի բնակիչ»։

Լռել են բանականության ծայները, հուսահատ պոետը ապավինել է Մայադների երեւակայական «փրկության կղզուն», որը կրկին կյանք պարգևեց շոշափելի մահվան երախը մտնող Ողիսեսին։ Չարենց «նավաբեկյալը», սակայն, այսպիսի ակնկալություն չունի, որովհետեւ իր օրերի թագավորը ոչ թե մեծահոգի Ալքիմոս է, այլ՝ ստոր դահիճ։ Նայադների թովիչ, կանչող ու հմայող, «սիրո անհատների հմայք խոստացող» Նավգիկեն թողնում է միայն «մորմոք եւ կարոտի կսկիծ»։ Այստեղից էլ երկի էլեգիական թախծի խորությունը։

«Նավգիկեի» մեջ խտանում են տառապող արվեստագետի աչքով ու զգացողությամբ դարերի ընթացքում կնոջ երբեւէ ունեցած հատկությունները, որակները, դրանց առաջացնող կենսական գրգիռները՝ ով էլ լինի կինը՝ երազական անկեղծ կույս, թե՛ համաշխարհային գրականագիտական միտքը շփոթած, Դե Գրիոյին միշտ հավատարիմ, անառակ, բայց համակրելի, առեղծվածային Մանոն Լեսկո, թե՛ «մարմարոնյա արծառ» կամ միկենյան կավե բարձրարվեստ վազ հիշեցնող ազնվագարմ տիկին, եբենյան կրքահարույց եգիպտուհի, թե՛ «Լուսնային շղարշ հագածի պես», թե՛ «Մերկացած, կնությունը բացած»։

*Մերթ աղջկա նման՝ մանկական տեսքով,
Մերթ որպես կին՝ տեսած երազի մեջ,
Մերթ իբրեւ կույս անեղծ, մերթ մի Մանոն Լեսկո
Պատկերացել է ինձ - իմ Նավգիկեն։*

*Մերթ սպիտակ որպես մարմարոնյա արծառ,
Մերթ միկենյան կավե մի վազի պես,-
Մերթ եբենյա մարմնով եգիպտուհի դարձած՝
Հմայել է հեռվից իմ Նավգիկեն։*

*Մերթ կոնքերով ողորկ, որպես ծուլած արծաթ,
Մերթ որպես էգ մի օձ երազի քեզ՝
Մերթ աչքերով կանաչ մի կին դարձած,
Անկեղծ մի կույս կարծած իմ Նավգիկեն։*

*...եվ հանճարեղ երգում, եւ հանճարեղ գրքում,
Եվ հանճարեղ ամեն մի կտավի մեջ,-
Եվ հյուսիսում, եւ Հիմ Արեւելքում,
Եվ հարավում դեղին, իմ Նավգիկեն։*

Նավգիկեին սպասելու, որոնել-գտնելու ձգտումը երկում դառնում է մտքի տենդ, մի իրական գեղեցկուհու առիթով հենց իր՝ Չարենցի ասած «իդեաֆիքսը», արվեստագետի կյանքի իմաստ ու նպատակ, այլեւ կոչում։

*Եվ իմ գրքերն ամեն, եւ իմ երգերն ամեն,
Եվ բոլորք հուրն իմ այս ծարավի կեզ,-
Ինչ որ արել եմ ես, ինչ անելու եմ դեռ-
Քեզ գտնելու համար է, իմ Նավգիկե...*

*Եվ պոետի հռչակ, եւ փառքի տենչ խորին,
Եվ արնահամ երգի, երազի սեր,-
Ես տենչացել եմ՝ լուկ հավատալով, որ ինձ
Դեռ սպասում ես դու, իմ Նավգիկե...*

Ահա թե ինչ արժե կին ներշնչանքն ու կին նեցուկը Չարենցի պես ստեղծագործողի կյանքում։ Բայց որտե՞ղ կարող են կինն ու սերը այսքան ընդհանուր ու այսքան անհատական լինել, այսքան հետեւողականորեն բաղձալի։

Քրիստոնեական մորալում դա ուրիշ գնահատական կստանար։ Մինչդեռ հունական դիցաբանությունը Չարենցին այդ հնարավորությունը լիովին տվել է։ Հունական առասպելում Չարենցի «շփումները» միայն Մայադների, նրանց թագավորի ու Ողիսեսի հետ չեն, ուր արվեստի հովանավոր Ապոլոնը «միջնորդ» է դառնում, այլեւ հայր Զեւսի...

Չարենցը հիանալի գիտեր, որ Զեւսը պարզապես ցուլ կհամարվեր եւ ոչ թե աստվածներից վեհագույնն ու գերագույնը, աստվածների ու մարդկանց տիրակալը, եթե հունական դիցաբանության մեջ նրան գնահատելու չափանիշը համարեին գեղեցիկ աստվածուհիներին նրա տիրանալու, վայելելու կիրքն ու նախանձը։ Զեւսի այս վարքագիծը ուժի եւ կենսունակության փառաբանությունն է, եւ պատահական չի ասվել՝ «Ինչ վայել է Զեւսին, վայել չէ եգին»։

Չարենցն ինքն էլ այս ասացվածքը գործածել է՝ փուչ ու դատարկ, բայց Զեւս ձեւացողներին անվանելով «ցուլ, անբան անասուն»՝ զեւսյան վարք ու կեցվածքի իրավունքը վերապահելով արվեստագետ հանճարին։

Լեոտ, Ալքիմենե, Ալկմեոն, Եվրոպա, Մետիս, Անտիոպե, Ֆեմիդ, Մելեմե, Իո, Դանայա, Լեդա, Պեսեփիոն, Էգինե, Արետե (վերջինս Ալքիմոսի կինն է, Նավսիկեայի մայրը), ահա այն կանանցից մի մասի անունները, որոնց հետ որպես սիրուհու կամ «կիսօրինականացած» կանանց, կենակցել է Զեւսը ու նրանցից բազմաթիվ զավակներ ունեցել, որոնք նույնպես դարձել են աստվածներ։

Չարենցի զեւսյան վարքագծից ծնվել են հոգեւոր զավակներ՝ գրական ստեղծագործություններ։ Քանի, քանի կին է մտել Չարենցի գրականություն՝ որպես Նավգիկե, որոնց նա ընծայել է ժողովածուներ, շարքեր, տարբեր ժանրերի առանձին երկեր, նամակներ։ Աստղիկ Ղոնդախչյանին՝ «Երեք երգ տխրադալով աղջկան», Կարինե Քոթանջյանին՝ «Ծիածան» ժողովածուն, առանձին ֆրագմենտներ, Արմենուհի Տիգրանյանին, որը գրչակից սիմվոլիստ բանաստեղծ էր ու գեղեցկուհի՝ «Եմալե պրոֆիլը ձեր «գալանտ երգերի շարքը», «Նորից Արմենուհի Տիգրանյանին» ժողովածուն, այլ գործեր, բանաստեղծուհի Փառանձեմ Սահակյան Տեր-Մկրտչյանին (Լեյլի)՝ «Փողոցային պչուկուն» շարքի «Շամիրամ», «Անկունների սարսափից» բալլադները, անտիպ չիրատարակված գործեր, Լյուսի Թառայանին՝ նույնանուն «Լյուսի Թառայանին» շարքը, դարձյալ անուններով՝ «Գովք Արուսին», «Արաքսային», «Ո՛ր ես, Արաքս», Իզաբելային՝ «Անվերնագիր», «Օ, պրինցուհի իմ տնային...»։ Եվ այդ ցանկը երկար կարելի է շարունակել։

Սակայն թվարկված կանանցից ոչ մեկը Չարենցի կյանքում խաղացած դերով չի կարող համեմատվել Արփենիկի հետ, որին նա նվիրել է «Ութնյակներ արելին» շարքը (Արփիկ կամ Արփենիկ հենց արել է նշանակում), «Տաղարանը», «Տրիոլետներ Արփիկին», «Եպիքական լուսաբաց» ժողովածուն, այն էլ՝ ամեն ինչ ասող այսպիսի ընծայականով՝ «Նվիրում եմ այս գիրքս հիշատակին կնոջս, ընկերոջս, հերոսական բարեկամիս՝ Արփենիկ Չարենցին (Տեր-Աստվածատրյան), վախճանված 1927 թվի հունվարի 1-2-ի գիշերը երեւանի առաջին հիվանդանոցում»։ Ե.Չ. 1929.10 Լենինգրադ»։

Չարենցն Արփենիկի անունով է կոչել Իզաբելայից ծնված իր ավագ դստերը, որին Բոժիկ (աստվածուհի) էր անվանում։ Գիպսից հանել էր Արփիկի դիմակը եւ ձեռքի կրկնօրինակը, որոնք այժմ թանգարանում են։ Երախտագիտության նույն ոգին է արտահայտվել նաեւ «Նավգիկեի» երկրորդ մասի ընծայականում՝ «Կնոջս՝ Արփենիկ Չարենցի հիշատակին», ուր ցավի զգացողությունը խորն է ու կոնկրետ.

*Իր հոժար կամքով մահապարտված՝
Ընդունեց սերն իմ սեւ իմ Նավգիկեն...*

Նեկտար Գրիգորյանի վկայությամբ՝ «Արփենիկը Չարենցից բարձրահասակ էր, սպիտակամաշկ, բաց շագանակագույն մազերով, արտակարգ ճաշակով եւ արժանի բանաստեղծի կին լինելու բախտին»։ Այդ արժանավորությունը իրոք դրսևորվել է գործնականորեն։ Արփենիկը ալքիմոսյան մեծահոգությամբ հասկացել ու ներել է բանաստեղծի «մոլորությունները, սիրային պատմությունները, կենցաղային ու գրական սկանդալները»։

Չարենցի կյանքում Արփենիկի բացառիկ նեցուկ լինելը վկայել է նաեւ Մարո Ալազանը՝ գրելով. «Ոչ մի «իրեշտակ» չէր կարող Չարենցին անջատել Արփենիկից։ Նա ամեն ինչ էր Չարենցի համար, առանց որի Չարենցն իր կյանքը չէր պատկերացնում։ Երբ Չարենցը «խենթություններ» էր անում, շարունակում է հուշագրողը, - Արփիկը «կարկուտ էր որոտում» նրա գլխին։ Կարճ ժամանակից հանդարտվում էր, նրա հոգում արեւը ծիածան էր կապում, եւ Արփիկը սկսում էր հանգիստ խրատել, իսկ Չարենցը փաթաթվում էր նրան, համբուրում նրա ձեռքերը»։²

Ժամանակակիցների այսպիսի վկայությունները ցույց են տալիս, որ Չարենցի բոլոր երկրային սերեկի «խավարման» անանց վշտի արձագանքը եւս.

*Կարոտներիս ծովի կղզիներում անցած
Դու իմ կղզին եղար միակ ոսկե,-
Բայց սեւ աղետ դարձավ եւ մահացու հանցանք
Քեզ համար սերն իմ, իմ Նավզիկե...*

«Սեւ աղետ» եւ «մահացու հանցանք» դարձած «սեւ սեր», որովհետեւ Չարենցը մինչեւ վերջին շունչն էլ չհաշտվեց Արփենիկի մահվան հետ, որի պատճառների մեջ Չարենցը, որքան էլ անմեղ, բայց տեսնում էր իր մարդկային ու բանաստեղծական ճակատագրի հետեւանքները եւս։ Իսկ թե որքան ծանր է տարել սիրելի կնոջ մահը, ինչչէր է արել նրա հիշատակի հավերժացման համար, ինչպիսի տառապանքների է ենթարկել իրեն, - դրանց ավելի մանրամասն վկայությունը տրված է Վահան Յովսեփյանի «Չարենցյան մտաբերումներ» հուշերում, որ այնքան շատ է համընկնում «Նավզիկեի» Արփենիկին ուղղված մասի յուրաքանչյուր տան ավարտին.

*Դու ժպտացիր անցար, աներեւույթ դարձար,
Օ, մահացու իմ սեր, իմ Նավզիկե...*

Արփենիկ-Նավզիկեի տեսիլը երկրորդ մասից հասնում է մինչեւ երկի ավարտը։ Երրորդ մասում «Նայադների չքնաղ երգին գերի» Ուլիսի պես (Ոդիսեւս) քնարական հերոսը կրկին մոտենում է «այն փերին»։ Նույն նայադներն են, նույն երգը եւ նույն Նավզիկեն, բայց «եզերքը» նրան թվում է «ամայի», որովհետեւ մնում է անթրձագանք։ Երկի չորրորդ մասում նրան հանդիպում են բազում Նավզիկեներ, որոնք դարձյալ օտար են «Մերթ որպես ուրիշ Ուլիս, ուրիշի սեր», մերթ՝ «Ուրիշի սիրո Նավզիկե», «Մերթ ուրիշի սիրո արքայադուստր դարձած», մերթ՝ իրեն «Միայն սիրուհի դարձած» եւ այլն։ Եվ կրկին ու կրկին Արփենիկ-Նավզիկեի առջեւ բացում է սիրտը՝ որպես ապաքեն, խոստովանանք ու ապաշխարանք.

*Արկածներիս կարմիր կարոտներում փնտրած
Ինձ չժպտաց ոչ մի Նավզիկե,-
Եվ ինչ տալու էի ես աշխարհում նրանց-
Իմ սիրած աղջիկ, տվեցի քեզ...*

*Ուղիներում կյանքի, բիրտ օրերում մեր այն,
Ինչ որ կարոտ էր, հուր էր - ես տվի քեզ,
Որ չմնա երազ էլ, որ երազեմ նրանց,
Որ չկանչե էլ ոչ մի Նավզիկե:-*

«Ինչ որ կարոտ էր, հուր - ես տվի քեզ» տողը հուշում է «Տաղարանի» ընծայականը, «Տաղարանի» օրերի զգացումը Արփենիկ-Նավզիկեի նկատմամբ՝

*Ինչքան որ հուր կա իմ սրտում - բոլորը քեզ,
Ինչքան կրակ ու վառ խնդում - բոլորը քեզ-
Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա
Դու չմրսես ծնունդ ցրտում - բոլորը քեզ...*

¹ Դավիթ Գասպարյան, Ողբերգական Չարենցը, Երևան, 1990, էջ 121-122:
² «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»։

Եվ այսպես, որքան էլ ընդհանուրն ու մասնավորը, երազն ու առօրյան միջի մետաֆորիստիկայով առնվում են նույն վարագույրի տակ, բայց չեն նույնանում։ Միջական նայադների տեսքով կին-Նավզիկեները եղել են Արփենիկ-Նավզիկեից եւ առաջ, եւ հետո, բայց իսկական, մնայուն սերն ու նեցուկը Արփենիկն է։

«Նավզիկեն» «Չարենց-Նամեի» չնախատեսված շարունակության ավարտն է։ 1922-ին գրած «Չարենց-Նամե»-ում գրողը թեւ զգալի թախիծով, բայց վերջին հաշվով իր անցյալից բաժանվում էր «ծիծաղով»՝ ոգեւորված ազգային վերածնության համար հեղափոխության ստեղծած նախադրյալներով, իսկ «Նավզիկեում»՝ հիասթափությամբ, հուսախաբությամբ, ողբերգությամբ։

Իր «ամենաչքնաղ երկում» Չարենցի արտահայտած ողբերգությունը ծնունդ էր այդ նույն հեղափոխության ունեցած հպկառակ հետեւանքի, որի զոհ դարձավ նրա սերնդի մտավորականության ընտրանին՝ նաիրյան դժխեմ ճակատագրին մշտապես ուղեկցող մի երեւույթ, որի կրկնվելու հնարավորության մեջ Չարենցը մարգարեացել էր «Չարենց-Նամեից» էլ առաջ («Մահվան տեսիլ», 1920թ.)՝ կամենալով նման դեպքում գեթ ինքը դառնալ միակ զոհը.

*Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան...*

Իսկ երբ մարգարեական կռահումը դարձավ անխուսափելի իրողություն. 1935-36 թվականներին արդեն ամենաերեւելիների ոտքերն էին մոտենում կախաղանին, մահապարտ Չարենցին այլեւս ուրիշ բան չէր մնացել, քան այդ «կախաղանին» հավերժական սիրո որոնումը հակադրելուց։

«Նավզիկեն» գրական արվեստի այն հուշարձաններից է, որ բոլոր ժամանակների համար էլ բացահայտվելիք մոր շերտեր ու ենթաշերտեր ունենում են։ Նրա մասին դեռ շատերը կգրեն եւ նրա մեջ մոր մեկնակետեր ու նրբերանգներ կհայտնաբերեն։

А. Н. Адамян - О произведении "НАВЗИКЕ" Егише Чаренца - "НАВЗИКЕ", названное автором "мое самое прекрасное произведение", опубликовалось после реабилитации автора в середине 60-х годов. До сих пор оно считалось поэмой или стихотворением, однако по жанровым и тематическим критериям более подходит к классической элегии, самобытно дополнив и окончив поэму "Чаренц-Намэ".

В статье показано, как Е. Чаренц, используя греческую мифологическую символику, вопреки своему кошмарному времени и судьбе, воспел вечную любовь.